

## ԳԻՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԱՐՈՒԵՍ

ՎԻՐԱՀԱՏՈՒԹԻՒՆ ԱՌԱՆՑ ՑԱԼԻ, ԵՐԲ ՆԵՐՔԻՆ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ անզօր է մնում, սախպուած են լինում դիմել վիրահատառաթեան՝ ընացնելու և գիտակցութիւնը թմրացնելու այլ և այլ միջոցներով, որի համար ծառայում են գլխաւորապէս քլորոֆորմը և եթերը, բայց այս միջոցները, որքան էլ արդի տեխնիկան կատարելապործած լինի, թիշ թէ շատ վնասակար հետևանքներ ունին և առհասարակ անվտանգ չեն:

Այս պատճառով բժշկները վաղուց ի վեր այնպիսի միջոց էին որոնում գոնել, որ անդամահատութիւնը անզգավի լինի հիւանդի համար, առանց զրկելու նորան գիտակցութիւնից: Տերլինի բժիշկ Շլեյխին յաջողեց գտնել միջոց, որով շատ զէպօքերում առանց ցաւ պատճառելու կարելի էր լինում վիրահատութիւն կատարել՝ յայտնի դեղային խառնուրդով, այս լուծուածքը սրսկում են հաշուի տակ, ուր որ պէտք է վիրահատել: Միաժամանակ առաջ են բներում կատարեալ անզգայցում կօկանուի, որ շարունակում է նոյն իսկ երկարատև վիրահատութեանց ժամանակ: Անզգայցումը ուժեղացնուում է նոյնպէս արիւնը հեռացնելով վիրահատելի տեղից: Արիւնից ազատ տեղը ուղացնում է կօկանինի ծծուելը և սորանով պակասեցնում նորա թունաւոր ազդեցութիւնը Տեղական անզգայցման փորձերը հետաքրքրական հետեւանքների են հասցըել, որ մարմնի մէջ կաշին աւելի զգայուն գործարան է, քան խորը գոտնուած հիւսուածներ: Այսպիսով կտնարքի վիրահատութիւնը գրեթէ անցաւ է անցնում: Կարելի է կտրտել, ծակծը կել և ճխլաել ստամոքսն ու աղիքները, առանց զգացողութիւն առաջ բերելու: Սորա հակառակ հիւսուածների և ներքին մասերի գրգումը խիստ ցաւաբեր է լինում, այնպէս որ փորի ներաց անկարելի է այդ եղանակով անդամահատել:

Նշանաւոր յաջողութիւն ունեցաւ առանց ցաւի վիրահատութեան, այսինքն առանց գիտակցութիւնից զրկելու զէպօքում մէջքի ուղեղում անզգայցնող դեղ սրսկելու եղանակը,

որ գտան գերմանացի գիտնականներ՝ Կվինկէն և Քիլը իսկ Բիրը առաջին անգամ Բօննում սրակեց մէջքի ուղեղի խողովակում կօկախն առանց որևէ չ վնաս պատճառելու և բոլորովին կատարելագործեց այդ եղանակը։ Այժմ կարելի է առանց ցաւի շատ վիրահատութիւններ կատարել ուղիղ աղիքում, իջուածքներում և այլն, բոլորն էլ Բիրի շնորհիւ Մէջը ծակ ասեղով թեթե ծակելով ողնուղեղը, որ գրեթէ ցաւ էլ չէ պատճառում, ծակից դուրս է գալիս ողնուղեղի հիւթը, իսկ ըժիշկը ներսրակում է սատվախնը։ Մի քանի ըոպէից հիւանդն զգում է, որ ծնկները գնչանում են, իսկ 10 ըոպէից արդէն ըոլորովին անզգայանում է և չէ կարողանում ոտները շարժել։ Մէջքի ուղեղի անզգայութիւնը առաջ է բերւում ազդելով նեարդերի վերայ, որոնք դուրս են գալիս ողնուղեղից և տարածում մարմնի ամեն կողմ։ Բայց առ այժմ այս եղանակը չէ կարելի գործադրել մարմնի վերին մասերի համար։

Այս եղանակով վիրահատելը այնքան յարմար միջոց է, որ ինչպէս քաջասիրտ հիւանդը, այնպէս էլ թուլանեարդը, միակերպ չեն զգում ցաւ, և շատ հիւանդներ նոյն իսկ երկարատես վիրահատութիւնից յետոյ դեռ անհամբերութեամբ հարց են տալիս՝ թէ երբ պէտք է սկսուի վիրահատութիւնը։

ՕՐ. ՆՈՒԱՐԴ ՍՂԱՆԵԱՆՑ